Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

A 6921

Հրատարակութիւն Ա. Ս. ԵՐԻՑԵԱՆԻ

№ 1.

ԵՐԱՉ

ԿԱՄ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԵԴԵՄՈՒՄ

ՖԷՅԵՐԻԱ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԵԴԵՄ ՍԵՐԳԵՐԵՆ-ԵՐԵՒԱՆՑԵՆԻ

(Արտատպած Տարաղ շաբաթաթերթի №№ 10, 11, 12, և 13-ից):

ԹԻՖԼԻՁ
Արազատիպ Մն. Մարտիրոսեանցի
Պուշկինեան փողոց, № 12.
1903

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99
Ս-216
NOV 20

ԵՐԱԶ

ԿԱՄ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԵԴԵՄՈՒՄ

ՖԷՅԵՐԻԱ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷԴԸՄ ՄԱՐԴԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆԻ

(Արտատպած Տարազ շաբաթաթերթի №№ 10. 11. 12. և 13-ից)։

ԹԻՖԼԻԶ
Արազատիպ Մն. Մարտիրոսեանցի
Գուչկինեան փողոց, № 12.
1903

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясн. ина
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2 9 ՄԱՅ 2013

Дозволено цензурою 2 Іюня 1903 г. г. Тифлисъ.

ԵՐԱՁ

ԿԱՄ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԵԴԵՄՈՒՄ

ՖԷՑԵՐԻԱ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

---

1) *Եղեայ* } *դատաւորներ.*
2) *Աբրահամ* }
3) *Ռափայէլ*
4) *Միքայէլ*
5) *Ստեփաննոս, քարտուղար.*
6) *Պետրոս, դռնապան.*
7) *Յովնան, արդար.*
8) *Օսկան, մանրունք ծախող.*
9) *Եւայ*
10) *Մագթաղինէ*
11) *Ենովք, այգեպան.*
12) *Գաբրիէլ*
13) *Մի մանուկ*

Արդարներ, դասք հրեշտակաց։

ՏԵՍԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հրաշալի այգի արեւադարձի թէ ծառերով եւ թէ ծաղիկներով։ Խորքում՝ ձախ կամարապատ երկաթեայ դռներ։ Աջ՝ նախաբեմում դատարանական սեղան, ծածկուած կանաչ սփռոցով, շուրջը ֆանտաստիկական բազկաթոռներ կամ քառակուսի նստարաններ, ծածկուած դունաւոր կերպասներով. իսկ երկրորդ պլանում փառայեղ տաճարի ճակատն է երեւում իր մարմարեայ աստիճաններով. երկու կողմը հրեշտակների մարմարեայ արձաններ։

Խորքում երեւում է ջրվէժ։ Երկնակամարի վրայ երբեմն երբեմն երեւում է լուսինն ու ծածկւում, նոյնպէս աստղեր։ Էլեկտրական գոյնզգոյն լոյսը անդադար ընկնում է զանազան ուղղութեամբ թէ շինութեան, թէ ծառերի եւ թէ ջրվէժի վրայ։ Աղամիջոցին երբեմն երբեմն թռչում են աղաւնիներ։

ՏԵՍԻԼ Ա.

Մեղմ խմբական աղօթքի ձայնն է լսւում կուլիսներում. երկինքը շառագունւում է էլեկտրական ծիածանագոյն գոյներով։ Մտնում է աջ կողմից Ենովքը, իսկ ձախ կողմից Պետրոսը *)։

ԵՆՈՎՔ

Սիրեցեալդ իմ Պետրոս, այսօր տարօրինակ բան նկատեցի, որ համարեա աշխարհի ստեղծագործութիւնից մինչև այժմ չեմ տեսել. մօտ 97800 տարի է, որ այդպիսի եմ այստեղ և ոչ մի ժամանակ իմ ծաղիկներն այսպէս անխընայ չեն եղել կտրատուած, ինչպէս այժմ, անշուշտ աշխարհային մարդ է մտած։ Երկի Ապօղոն հայրը սխալմամբ վկայութիւն է տուել որ և է յանցաւորին. չէ՞ որ նա չափազանց զբաղուած է։ Ասում են, Մակեդոնեայում, Հայաստանում և հարաւային Աֆրիկայում սուր և սրածութիւն է կատարւում, իսկ Ադամ նախահայրը վիճակագրական տեղեկութիւններ է կազմում, չըլինի թէ վերջինս շտապելուց համարները շփոթել է։

*) Մէջքանի բեմական դժուարութիւնները պարզելու համար ցանկացողները կարող են դիմել հեղինակին։ Ա. Ս.

ՊԵՏՐՈՍ

Այդ աւելի հաւանական է։ Որ մեղքը չափազանց շատացել է երկրագնդի երեսին — այդ պարզապէս երևում է —. վերջին չորս օրը ոչ մի նոր արդար հոգի չի եկել մեր Եդեմը։ Իրարանցումը սաստկացել է Տարտարոսում։ Այսօր Բեհեղզեբուղից հեռագիր ստացանք, որն առաջարկում է դժոխքի բաժանմունքներ բանալ տիեզերքի զանազան մասերում և խնդրամատոյց է լինում որ Սատուրնոսը միջնորդէ Արարչին։

ԵՆՈՎՔ

Ի՞նչպէս, մի՞թէ այդքան նեղուածքուլթիւն է. հապա Գաբրիէլ հրեշտակապետը հաւատացնում էր, որ կըբաւականանայ մինչև արևի վերջանալը. իմ կարծիքով հազիւ թէ արևը նոր է սկսել ջերմանալ ու կարմրել. ուրեմն այդ հաշւով 470,000 բաժանմունք էլի նորից կըհարկաւորուի։

ՊԵՏՐՈՍ

Ինչ արած. Բեհեղզեբուղն 'ի միջի այլոց գրում է, որ միմիայն Սուլթանի համար պատրաստուած հարէմի յատակագիծը հաւասար է լուսնի մակերևոյթին, ուր մնաց միւս փաշաներն ու զանազան բռնակալները։ Առանց դրան էլ Սաթայէլի ու Բելլիարի առատաձեռնուլթիւնից

օգտուելով՝ ահագին կալուածքներ են ձեռք բերել Զինգիզ խանն ու Լենկթամուրը։

ԵՆՈՎՔ

Այդ հաւանական է, որովհետև Մուհամմէդը կաշառել է երկուսին ևս, նա եռանդով հոգացողուլթիւն է անում իր հպատակների համար։

ՊԵՏՐՈՍ

Այդ լաւ չէ, այն ժամանակ հեթանոսները հարկաւ դուրս կըմնան. խեղճ պապուասներն ու զուլուսները կրկին նոյն ողորմելիքը պիտի մնան. մի՞թէ այդ արդարուլթիւն է։

ԵՆՈՎՔ

Ինչ և է, սա մեր խելքի բան չէ, Արարչի գործն է։ Նա գիտէ ամեն ինչ կարգադրել, երևի իր ստեղծածին չի կորցնիլ. բայց ուր է Միքայէլ հրեշտակապետը, գուցէ նա բացատրէ այս ամենը, մի շաբաթ է որ Եդեմում չէ։

ՊԵՏՐՈՍ

Արեգնազի ասելով գնացել է Մարս մոլորակը. այնտեղ ևս անկարգուլթիւններ են ծագել ջրանցքների պատճառով։ Այդ խաղաղ մոլորակն էլ վատ օրինակ վերցրեց երկրագնդից. չէ, չըպէտք է այդքան մօտիկ հաստատէր. ին-

չու Նեպտունն այսքան խաղաղ է, որովհետև շատ հեռու է երկրաղնդից։

ԵՆՈՎՔ

Մի ասիր, սիրելի Պետրոս, Աստուած մարդոց այնքան խելք տուեց, զուցէ դիտմամբ, որ նրանք վերջին անգամները մտադիր են այնպիսի հեռադիտակ հնարել, որ մինչև անգամ ուզում են արևին քսան քայլ մօտեցնել և աստուածային կրակը գողանալ։

ՊԵՏՐՈՍ

Այդ դժուար թէ յաջողի, բայց օդապարիկով, լսել եմ, որ ուզում են Եդեմը մտնել։

ԵՆՈՎՔ

Ո՛չ, սիրելիս, հողմերի կառավարիչը վաղուց հրաման ունի ստացած արգելը լինել, իսկ օդային տեսուչն արդէն տկերի բերանն այնպէս ամուր փակել է որ մի խորանարդ դիւյմ անգամ աւելորդ օդ չէ տալու. ուրեմն ամեն ինչ նախկին ճանապարհովն է ընթանալու։ Օ՜, նեղողութիւն, խօսելով զբաղուեցայ, իսկ երբան գործ ունիմ կատարելիք. ծաղիկների հոգսն ինձ շատ է չփոխում, խնդրեմ դու ևս ուշադրութիւն դարձրու, եթէ որ և է բան նկատես, անմիջապէս Ռափայէլի կամ Ստեփաննոսի բերանով տեղեկութիւն տուր։

ՊԵՏՐՈՍ

Ուրախութեամբ։

ԵՆՈՎՔ

Ես կըլինիմ կենաց ծառի մօտ կամ թէ Եւայի քարանձաւում. այնտեղ Բեթղեհէմի մանկանց համար նոր բիւրեղեայ աւազան է պատրաստուում, պէտք է անմահական աղբիւրից երկու առուակ հանել տամ։

ՊԵՏՐՈՍ

Շատ բարի, քեզ լաւ յայտնի է, որ Հռովմից եկած օրից մինչև այսօր որքան աշխատուրջ եմ պաշտօնիս. վստահ եղիր, որ չեմ հեռանայ դարբասի դռներից և ոչ էլ օտար անձն կարող է ներս մտնել։

ԵՆՈՎՔ

Յ՛տեսութիւն։

ՊԵՏՐՈՍ

Յ՛տեսութիւն։ Բայց սիրեցեալդ Ենովք, չըմոռանաս կոյս Նունէի ձեռքով մի բաժակ անմահական ջուր ուղարկել, մինչև այսօր ընդամենը մի բաժակ եմ միմիայն ըմպել, վերջին օրերս ինձ շատ թոյլ եմ զգում, պէտք է այժերս վերանորոգել։

ԵՆՈՎՔ

Ինչու չես ասում, եղբայր, ամաչելու ինչ

կայ. լաւ, բարեոյ ծառից երկու խնձոր էլ կուզարկեմ, առանց կպճելու կուտես ջրի հետ միասին, այդ քեզ կըկաղդուրէ գոնէ վեց հազար տարի և միանգամայն առողջ կըզգաս։

Գնում է։

ՊԵՏՐՈՍ *մենակ*

Բաւական չփոթեցրեց ինձ ազնիւ Ենովքը. եթէ յիրաւի աշխարհական մարդ լինի եկած այստեղ, ես կարող եմ լուրջ նկատողութեան արժանանալ, գուցէ և պաշտօնազուրկ լինիմ։ Օ՜, ծանր է ինձ բաժանուել այս բանալիներից... Բայց ինչպէս կարող էր յանցաւորը ներս մըտնել նոյն իսկ ցանկապատից, չէ՞ որ մազէ կամուրջով պէտք է անցնէր, այն ժամանակ անշուշտ կընկնէր հրոյ անդունդը։ Ահա անբացատրելի երևոյթ. օ, երկիւղ եմ կրում, որ օգնականիս խաբած չըլինեն. երթամ, տեղեկութիւններ ժողովեմ։

Դուրս է գնում։

ՏԵՍԻԼ Բ.

Բեմը դատարկ է. լսւում է մաղթանքի երկրորդ տունը կրկին խմբական. երևում է հիւսիսափայլը։

ՕՍԿԱՆ *մենակ*

(*Մտնում է խորքից ձեռքերը յետեւը ծալած, ծանրաքայլ, նայում է շուրջը ապշած, հոտոտում է ծաղիկները եւ գլուխը թափ տալով զարմանք յայտնում։*) Վա՜հ, դուրթ էլ ինչ արմնելու քաղաք է էլի էս 'ի վերին Երուսաղէմը. ինչ ասես, վուր էստի չըկայ։ Էս բաղն ու բաղչէն խօ իստակ խիլքս տարաւ, կօսիս, էրազումն ըլիմ. էհ, ինչ էրազ, փառք Աստու ջէր չիմ քուռացի, ըհա, ծաղիկ չէ՞ բաս ինչ է, հ՜ը, հուտ իմ քաշում բաս ինչ է։ Վա՜հ, թէ ձիր մամի դանդրատօն կու սիրիք, մէ էս ծաղկին թամաշա արէք. հէնց գիտենաս լալ ու զումբուխտ ըլի։ Էստի է, թամամ բրիլիանտ է. վա՜հ, զմսըդի է չինած. թէ դասըդի է, բաս ինչի է ժաժ գալի ու հուտ ունէ... (*Հոտոտելով*) Իւֆ, իւֆ, իւֆ. միդայ քիզ տէր Աստուձ.

(*զրպանն է դնում*)։ Պահ, պահ, պահ, մէ էստղանցի հայերին (օդին) մտիկ արէք, թամամ անմահութին է էլի։ (*Նստում է*)։

Մախլաս, մէ սհաթ է բոլիա իմ տալի, օշ ով չէ երևում, ուր ին գնացի էս արթարնիրը. աւատաս մէ տիղ մէձարք ունին. ասա մաքրի է երևում. Զէնի ճիրիմէ, ինչ լաղաթ ունէ սրանց սուփրումը թամադուլթինը։ (*Նայելով ձախ կուլիսը*) Օհ, օհ, օհ, մէ էն գոչ-գոչանին թամաշա արէք, թէ Աստուձ կու սիրիք, վա, վա, վա. էս ինչ հրաշք է տօ, հէնց գիդենաս երծթէ ու օսկէ վարաղ արած քափ ըլի... գնամ, գնամ թամաշէն էնթէնն է էլի։—

ՏԵՍԻԼ Գ.

Լսւում է երրորդ անգամ մեղեդիի ձայնը. յետոյ զանազան Թռչունների՝ սոխակի, սարեակի, դեղձանիկի դայլայլիկը, հանդարտ երեւում է առեւը վերջալոյսի ժամանակ։ Երեւում է ծերունազորդ ԱԲՐԱՀԱՄԸ ձեռքին գաւազան։

ՕՍԿԱՆ

Վա, էս Փեթիսաինի ախկատն էլ էստի է էլի տօ. սա առաջ քու էր, հիմի կի աշկիը

ունէ. զօշաղ, լաւ ին պրծեցրի, ախպէր... Վունց որ տեսնումիմ, իմ չօլախ վուտն էլ կու լաւցնին, ա՛յ... Բիձա ջան, բարի աշողում։

ԱԲՐԱՀԱՄ

Ողջոյն գաւակս, ինչպէս ես, վաղուց է բարեհաճել ես մեր կողմերը։

ՕՍԿԱՆ

Փառք Աստուս, կամ էլի, մէ քիչ վուտս նիղացնում է։ Հա՛, հարցնիլն ամուլթ չըլի, բիձա ջան, անումդ ինչ է։

ԱԲՐԱՀԱՄ

Աբրահամ, գաւակս. բայց իսկապէս այստեղ ամենքն ինձ անուանում են Հայր Աբրահամ։

ՕՍԿԱՆ

Զընի թէ դուն էն Աբրահամն իս, վուր Իսակ վուրթի ունէր ու ուզում էր Աստուն մատաղ անի։

ԱԲՐԱՀԱՄ

Նոյն ինքը։

ՕՍԿԱՆ

Միղա՛յ Աստուս, ես քիզ ախկատ Զադօն գիտէի։ Օ՜, ես բու հորուն մատաղ, դուն էն սուրվին իս գանայ, վուր արթարնիրը գալիս ին քու տեսուլթիւն։ Փառք քիզ Աստուձ. գանայ

Ես էլ արժանացայ էս բախտին, ես, միղաւոր Օսկանս։

ԱԲՐԱՀԱՄ

Ի՞նչպէս, մեղաւոր, բայց անկարելի է, մեղաւորը Եդեմում... ոչ ոչ... չեմ կարող հաւատալ...

ՕՍԿԱՆ

Մի՛ չարանա, ցաւդ տանիմ, արթար մարթուն չարութինը չի սաղ դայ։

ԱԲՐԱՀԱՄ *կանչելով*

Ստեփաննոս։

ՍՏԵՓԱՆՈՍ *դրսից*

Ծառայ եմ, տէր։

ՕՍԿԱՆ

Վայմէ, բանը ս չլուր է։

ԱԲՐԱՀԱՄ (*բարձրաձայն*)

Բէր վերջին գործերը և 1902 թուականի դեկտեմբեր ամսուայ անուանացուցակն արդարոց։ (*Օսկանին*) Դու, մարդ արարած, պատկեր հողեղէն, հապա Ենովքին կամ Պետրոս դռնապանին չը ներկայացար։

ՕՍԿԱՆ

Պետրուսն ով է, բուլուշնիկը։

ԱԲՐԱՀԱՄ

Ես քեզ ասում եմ դռնապանը. հապա քեզանից տոմսակ չըպահանջեցին։

ՕՍԿԱՆ

Ի՞նչ, բիլէթ, Վա՛, դանա էստի էլ բիլէթով է. ինչ է, ցիրկ խօ չէ։ Բաղումը բիլէթն ով է իմացի։ Հարուր ջէր Օրթաճալա իմ էլի։ Վերայ, էնէնց էլ Բատանիշեսկի բաղը, վուր օրն իմ բիլէթի փուղ տուի, վուր հիմա տամ. ով փուղ կու խարջէ, բիլէթ է ու բիլէթ։ Երէխայ խօ չիմ վուր միրդ գողնամ։ Թարի կու բերին, հալբաթ ես էլ իմ մարիփաթը կու բանեցնիմ։

ԱԲՐԱՀԱՄ

Մի փոքր դժուարանում եմ հասկանալ քո բարբառը։ Պատասխանիր, հապա ինչպէս մտար Եդեմական Դրախտն արդարոց Արարչին։ (*Ստեփաննոսը մտնում է զորձերով*)։

ՕՍԿԱՆ

Ա՛յ ախպէր, ասիմ, թաքցնելու վունչինչ չունիմ։ Բաղչի դուսը ման էի գալիս, միխկս ինչ ծածկիմ, մաղվալ (մոշ) էի քաղում, մէկ էլ տեսնիմ, չափարի էնթէնը մէ սիրուն խաղուղի ճուվքը է քաշարած, սիրտս խիստ ուզից. քանց թէ ծրտի պրտի մաղվալ ուտիմ, հաղիր խա-

դուլ ուտիմ, ասի, ու թռայ գոբեմէն ու քաղեցի։ Ափսուս, կաբիս թիւքն էլ պատռեցի։

ԱԲՐԱՀԱՄ

Յետոյ։

Թերթում է թղթերը եւ Ստեփաննոսի ականջին բան ասում։

ՕՍԿԱՆ

Յետոյ ինչ, մտկումս ասի, արի մէ աչք ածիմ, տեսնիմ սա ինչ տիպ է, ու դէս ու դէն բոլթա տալ։ հախ Ասծու, խիստ հաւնեցի, լաւ բաղ է, լաւ էլ ամագ է դրած։ ինչքան գէլուր կունենայ սրա տէրը։

ԱԲՐԱՀԱՄ

Ինչեր ես խօսում, քեզ ասացի, որ Եդեմական Դրախտն արդարոց ես մտել առանց իրաւունքի և այդ բաւական չէ, խաղող ես կերել։ Կանչիր պատուարժան դատաւորաց։

Ստեփաննոսը գնում է։

ՕՍԿԱՆ

Հա՛, ցաւդ, տանիմ, ինչ էի արի, երեք շաբաթ դժուխկումը ջուր չէի խմի, խիստ ծառաւ էի, բերանս չորնում էր, բաս ինչ էի արի, ցաւդ տանիմ։

ԱԲՐԱՀԱՄ

Ի՞նչպէս, երեք շաբաթ անջուր մնացիր։

ՕՍԿԱՆ

Հա, հա, գենացվալէ սուլշի, դժուխկումը իմ պատիժն էտ էր։ ջրի մագիէր հալած արճիճ էին խմացնում ու մէկ էլ տաք տաք ծէրս։

ԱԲՐԱՀԱՄ

Այս մարդը չափազանց տարօրինակ է խօսում, պէտք է քննութիւն կատարել։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ՌԱՓԱՅԷԼ, ԳԱԲՐԻԷԼ ԵՒ ՍՏԵՓԱՆՆՈՍ

ՕՍԿԱՆ *սոսկումով*

Վա՛յ մէ, թուրմէ սրանք սուդիէք ին էլի, հիմի մտիկ արա վուր անմիղ բանը բան դառնայ ու սիբիրական չինին։

Ռափայէլը եւ Գաբրիէլը նստում են դատաւորների համար յատկացրած տեղերը։

ԱԲՐԱՀԱՄ

Եթէ չեմ սխալւում, դու քեզ Ոսկան անուանեցիր։

ՕՍԿԱՆ *դողալով*

Հրաման քիզ, Օսկան է։ դուրթ է հէրս թոքմաչի էր, ամա ես առուտուրական դուրս էկայ։—Ես էլ անումով մարթ իմ էլի, Ծինա-

1001/3719

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясн. ивна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

նաւուրի զանգակատունը իմ փուղովն է շինած։ Գէլաքնուրը վուր գալիս էր, առչի գամը Քարտաշովն ինձ էր ղրդում։ Վից ջէր Ջիգրաշէնի իրիցվուս իմ էլի։

ԱԲՐԱՀԱՄ

Այդ բոլորը դու կըպատասխանես դատաւորաց առաջ. առ այժմ, Ռաֆայէլ, սրան տար քաւարանը։

ՕՍԿԱՆ *վախեցած*

Վայ մէ, քաւարանը վուրն է, բիրթը՞։ Չէ, չէ, Աբրահամ ջան, անդանակ մի մորթի, ախար միխկս ինչ է։

ԱԲՐԱՀԱՄ

Մի հակառակիր, գնա քաւարան՝ թզենու հովանոցում. կըկանչենք իւր ժամանակին։

ՕՍԿԱՆ *կիսաձայն*

Ախար ինչու, ջանիդ մեռնիմ, մէ ճութ խաղուղը գանայ ինչ է, վուր էդքան մինձ սլէդստվեայ իք սարքում, վուր գլխամեռը մէ բթուց չըվջարիմ։

ԱԲՐԱՀԱՄ

Խնդիրը խաղողի մասին չէ, խնդիրը իրաւունքի մասին է,

ՕՍԿԱՆ *կմկմալով*

Ախար...

ԱԲՐԱՀԱՄ *ցուցամատով զարկում է կզակին։*

Այլ ես ոչ մի խօսք։

ՕՍԿԱՆ *կողմ*

Վայ մէ, էս ինչ արաւ, ձիր ցաւը տանիմ, չանէս ծռմռում է. (*Աբրահամին*) բաս գնամ։

ԳԱԲՐԻԷԼ *սպառնալի*

Այո, աւելորդ է հակառակելը, որովհետև եթէ արժանի չես Եդեմական Դրախտին, այն ժամանակ աստուածային ամենակարող զօրութեամբ մի ակնթարթում կրկին կըտեղափոխուես Սանդարամետ։

ՕՍԿԱՆ *համարձակ*

Ինչի, վա, էգէբա վուրթիս չալիշ է էկի էնդի ու հոքիս ազատիլ է. ով գիդէ, էգէբա մանիփէստ է ու բախշիլ ին։

ԱԲՐԱՀԱՄ

Այդ բոլորը վերջը կերևայ։ Գաբրիէլ, առանց խօսեցնելու տար իւր տեղը։

ԳԱԲՐԻԷԼ *ընտում է Օսկանի թեւից, միւս ձեռքով ընտած ունի երկար շիլդ.*

Երթանք։

ՕՍԿԱՆ *ծռմռուելով*

Վայ մէ, վայ մէ, վայ մէ. էս ինչ ժրիալ էր վուր ջանումս անցկացաւ, հէնց գիդենաս խու-

տուտ է ածում։ Գնամ, գնամ ախպէր, կամանց կամանց իրանց հունարնիրը չանց ին տալիս։ Ա՞խ, Օսկան, լիզուդ չորնայ հա, վուր քու բանը դուն փչացրիր։

Գնում են ձախ։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՑՆՔ, ԱՐԱՆՑ ՕՍԿԱՆԻ ԵՒ ԳԱԲՐԻԷԼԻ

ԱԲՐԱՀԱՄ

Ստեփաննոս, կարդա վերջին համարը դեկտեմբերի 26-ից։

ՍՏԵՓԱՆՆՈՍ *կարդալով*

Կրիւգեր՝ Տրանսվայլի նախագահ, 80 ամեայ ծերունի։

ԱԲՐԱՀԱՄ

Բարի, ես լսած եմ, այդ մարդն 'ի սկզբանէ աստուածաշնչի սիրահար էր։ Զարունակիր։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Դրայֆուս, չորս տարուան նահատակ ս. Հելինէի կղզում, Մամբրէ եպիսկոպոս, Գուլաբինց Օսէփ՝ սնանկացած վաճառական, «Трудъ»՝

«Աշխատանք»-ի խմբագիր Կիշկին և Եագոր Գոլսնով։

Այս ցուցակը միշտ պէտք է փոփոխութեան ենթարկել եւ յարմարեցնել օրուան հարիքին։

ԱԲՐԱՀԱՄ

Ո՞վ է այդ Եագորը։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Ազատարար նաւի տէր է, հայր Աբրահամ։ Չորս հարիւր վաթսուն հոգի ազատել է խեղդուելուց, բոլորն էլ անմեղ հոգիներ, բացի չորս հատ անպիտաններից, որոնց պարոն Եագորը չէ ճանաչել։

ԱԲՐԱՀԱՄ

Հետաքրքիր է, գործերում յիշուած են այդ անպիտան սրիկաները։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Պարզ չեն արտագրուած և բացի դորանից թանաք է թափուած վրան։

Կարելի է յիշել մի քանի անարժանների անուններ, օրինակ՝ մի կաշառակեր պաշտօնեայ, մի անամօթ քննադատ, մի N. փաշա, մի Z. դատաւոր, մի Q. աւազակ եւ այլն։

ԱԲՐԱՀԱՄ

Չորս հարիւր վաթսուն։

ՌԱՓԱՑԷԼ

Այո, լուսահոգին 49 անգամ թոքերի բորբոքումն է ստացել։

ՍՏԵՓԱՆՈՍ

Առանց որևէ վարձատրութեան։

ՌԱՓԱՑԷԼ

Ինն տուն անգամ խնդրամատոյց է եղել հայոց բարեգործական ընկերութեան, խնդրելով նշին նպաստ և հաղիւ հաղ...

ԱԲՐԱՀԱՄ

Հաղիւ հաղ ինչ։

ՌԱՓԱՑԷԼ

Բարեխօսութեամբ երեք կաթողիկոսաց, երկու պատրիարքաց, 18 խմբագրաց, 40,000 անմեղ մանկանց, վերջապէս միանուագ ստացել է իբր 'ի խրախոյս և վարձատրութիւն միմիայն խինայի փող՝ չորս ռուբլի վաթսուն կոպէկ—մարդագլուխ մէկ կոպէկ։ Մինչդեռ մարդ Աստուծոյն աղատելով Սուսանովի բուլդոկին ստացել է 14 ռուբլի, աղատելով Բաբանասովի հնդկահաւին ստացել է 3 ռ. աղատելով Քէշիշովի խոզին—9 ռ.։

ԱԲՐԱՀԱՄ

Անխիղճ վարձատրութիւն։ Նշանակում է բարեգործական ընկերութեան աչքում բուլդոկը, հնդկահաւը և խոզը աւելի մեծ արժէք ունին, քան մարդը։—Այս իրողութիւնը պէտք է առանձին զեկուցանել Նախագահին։ Լսիր, Ռափայէլ, երբ լսէք շեփորի և փողերի ձայներ, որ յայտարարում լինեն հանրածանօթ Եգոր Զուրաբիչի գալուստը, հրամայիր, որ ամբողջ ճանապարհը սփռեն մայիսեան վարդերով. ճերմակ բեհեղեայ շապիկ հագցրէք, իսկ գլուխը պսակեցէք դափնիներով։

ՌԱՓԱՑԷԼ

Արդեօք արմաւենու ոստ չըտանք ձեռքին։

ԱԲՐԱՀԱՄ

Անպայման։ Եւ երբ կըմտնէ յաղթական կամարի տակ, թող խեղդուող ոգիներն աղաղակեն միաբերան. «Օրհնեալ ես ծնունդ մարդկան որ եկեալ ես 'ի ներքուստ». միով բանիւ ցոյց տուէք պատշաճաւոր ընդունելութիւն։ Ցայտնեցէք վրացի Բագրատէին, նա լաւ է իմանում ընդունելութեան ձևերը։ Հասկացա՞ք։

ՍՏԵՓԱՆՈՍ և ՌԱՓԱՑԷԼ *միասին*

Այո, հայր Աբրահամ, հասկացանք։

ԱԲՐԱՀԱՄ

Զարունակիր։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Եղբարք Կուզանովներ։ *) Այստեղ հարցական նշան կայ։

ԱԲՐԱՀԱՄ

Ինչո՞ւ։

ՌԱՓԱՑԷԼ

Երևի նորա համար, որ հանդուցեալները զոհ են գնացել դատարանական սխալմունքին։

ԱԲՐԱՀԱՄ

Վերջացո՛ւ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Ոչ, մի հատ ևս կայ, դերասան Մարդեղեանց։

ԱԲՐԱՀԱՄ

Դերասա՞ն, այդ անկարելի է, թիւրիմացութիւն է. ինչ, մի՞թէ ուզում են արքայութեան վարկը վայր ձգել. նա բոլոր անմեղ ոգիներին կը դայթակղեցնէ. ո՛չ ո՛չ, այստեղ կատակերգութեան տեղը չէ... անպատճառ Սանդարամետ, Բելլիարի, Սաթայէլի մօտ և ոչ այլ ուրեք։

ՌԱՓԱՑԷԼ

Ո՛չ, հայր Աբրահամ, թիւրիմացութիւն չէ,

*) Նայելով հանգամանքին կարելի է յուցակը երկարացնել կամ սեղմել։

այլ կատարեալ ճշմարտութիւն. միակ բացառութիւնն է երկրագնդիս երեսին։

ԱԲՐԱՀԱՄ *յուզուած*

Վերջապէս ինչ է արել։ Ստեփաննոս, կարդա՛ վարքագրութիւնը։

ՍՏԵՓԱՆՆՈՍ *ուրիշ գրքեր քրքրելով*

Համար գործոյն 999,999։

ԱԲՐԱՀԱՄ

Դատա՞ր։

ՌԱՓԱՑԷԼ

Այո՛,

ԱԲՐԱՀԱՄ

Կարդա՛ բարձրաձայն և որոշակի։

ՍՏԵՓԱՆՆՈՍ *կարդալով*

Ցիշեալ դերասանը նահատակաց դասակարգին է պատկանում. համբերատար, որպէս երանելին Յովբ, վասն դի երեսուն և հինգ տարի ծառայելով հայ բեմին, երեսուն և հինգ կոպէկ չի ստացել. ընդհակառակը նորամատուցած հարիւրաւոր ծառայութեան փոխարէն, հարիւր անգամ դլխին բամփոց է ընդունել։ Ցիշատակութեան արժանի է նորա փառահեղ և արդիւնաւոր բժշկականութիւնը, անկաշառ նօտարութիւնը և արդարադատ թագաւորութիւնը։ Տասն և ութ անգամ ընտրուած է հիւանդանոցի

վերատեսուչ. քանի քանի խելագարներ, ախտաժէտներ, անդամալոյծներ, բժշկուել են սորա ձեռքով: Մնացեալ տարիներն անցուցել է պարբերաբար թագաւորելով երկրագնդիս զանազան մասերում։ Եղել է Դանիայի թագաւոր, Իսպանիոյ, Հայաստանի, մինչև անգամ Պարսից Շահ։ Ահա նոյն իսկ այդ արդիւնաւոր թագաւորութեան ժամանակն էր, երբ իւր առատաձեռն և ողորմած հրովարտակներով անսահման բարեգործութիւններ է արել։ Հանգուցեալը միջնորդ դատաւոր է եղել Հապում և վեց թագաւոր հաշտեցրել է առանց որևէ տուգանքի. Նապոլէոնի և Աղէքսանդր Մակեդոնացու անզուսպ արշաւանքներին միմիայն սա է յաղթահարել։ Ի բաց առեալ այս բոլորը՝ նորա ձեռքով կառուցուած են անթիւ տաճարներ, հրաշակերտ թանգարաններ, անկելանոցներ և մարդասէր հիմնարկութիւններ. զորն ասեմք և կամ զորն նկարագրեմք,

ԱԲՐԱՀԱՄ

Բաւ է, կարդա եզրակացութիւնը։

ՕՏԵՓԱՆՆՈՍ

Եզրակացութիւն։ Եւ այսքան արդիւնաւէտ գործունէութեան փոխարէն մի ծափահարութեանն անգամ չի արժանացել, այո, չէ ստացել

ոչ միայն դավնեայ պսակ, այլ մինչև անգամ ջնջելէ ծաղկէփունջ...

ԱԲՐԱՀԱՄ

Բաւէ, քանի որ այդ բոլորը ճշմարտութիւններ են, այն ժամանակ այլ խնդիր է։ Մոռացայ հարցնել, Օտեփաննոս, կարդա դատաւորութեան ժամանակ եղած վկաների աղգանունները, արդեօք նորա ևս արդար հոգիներ են։

ՕՏԵՓԱՆՆՈՍ *քրքրելով թղթերը*

Այո, հայր Աբրահամ, ահաւասիկ Աղասեանց, Ջաղայեանց, Սալոմէ և Նարգիզ խաթուն։

ԱԲՐԱՀԱՄ

Թող ուրեմն ներս մտնէ. միայն հասկացրէք, որ այստեղ այլ ևս ոչ մի խօսք չըբանայ թատրոնի մասին, այստեղ չըյիշուեն բեպերտուար, անպլուայ, բէժիսսոր, աֆիշա, գօնօրար, բենեֆիս և այլն բառեր, այլապէս դժուար չէ վճիռը բեկանել տալ։

ՕՏԵՓԱՆՆՈՍ

Ես վերջացրի։ Այսքանն էին, հայր Աբրահամ։

ԱԲՐԱՀԱՄ

Բայց դու լաւ նայիր, գուցէ աչքիդ փախցրիր. մի՞թէ Ոսկան անունով մարդ չըկար ցանկիդ մէջ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Ո՛չ, տէր իմ, համեցէք տեսէք։

ԱԲՐԱՀԱՄ

Ուրեմն անպատճառ պէտք է խորհրդածել. մնա այստեղ մինչև Նախագահի գալը. ինքնագլուխ չեմ կարող կարգադրել, վասն զի այս օրինակ դէպք առաջին անգամն է պատահում. այո, ես չեմ յիշում որ գտնուէր մի մարդ, որ կարողանար Սանդարամետից փախչել և այն ևս առանց թոյլտուութեան Եղեմ մտնէր. օրինաց դրքում չէ յիշուած սորա պատիժը։ Ց'տեսութիւն, օրհնեալ եղիցիք, կարծեմ ժամասացութիւնը սկսած պիտի լինեն։ Երթայք 'ի խաղաղութեամբ։

Գնում է։

Ստեփաննոսը ժողովում է թղթերը եւ դուրս է գնում Ռափայէլի հետ միասին։ Կարճ լռութիւն. լսում են զանգերի ղողանջիւն եւ երգեհոնի դաշնակցութեամբ մեղեդիներ։

ՏԵՍԻԼ Ե.

ՕՍԿԱՆ *եւ* ՄԱԳԹԱՂԻՆԷ, *քիչ յետոյ* ԵՒԱՑ

ՄԱԳԹԱՂԻՆԷ

Ողջոյն, հայրիկ, դուք էք Բէլթանիայից նոր եկած հիւրը, եթէ չեմ սխալւում Ղազարոսն էք։

ՕՍԿԱՆ

Չէ, աղջիկ պարոն, դուրթ է Ղազարոսն էստի է, ամա ես մանրումք ծախող Օսկանն իմ՝ Բէդովլաթովը. չէք ճանչնում, Սունդուկովի բիձու տղէն իմ։

ՄԱԳԹԱՂԻՆԷ

Վաղուց է թողել էք ունայն աշխարհը, չարչարանաց երկիրը։

ՕՍԿԱՆ

Ի՞նչի, աղջիկ պարոն, միր քաղաքը էնքան էլ չարչարանաց քաղաք չէ. ափսուս չէ՞։

Մտնում է Եւան։

ԵՒԱՑ

Քոյրիկ, դու այստեղ ես, քեզ էի որոնում. երթանք, ժամերգութիւնն սկսուեց։

Օսկանին ընդունում է։

ՕՍԿԱՆ

Վա՜, սա էլ ո՞վ է, մնամ վուր ճանանչս գալիս է։ Աղչիկ պարոն, հարցնիլն ամուլթ չըլի, դուն խարաղ Մինասի աղչիկ Սօնէն չէս, հը՞, հաղիր վուր չիս փոխուլ։ Սօնա ջան, քու մարթն էլ էստի է։

ԵՒԱՆ *նայելով Մազթաղինէի երեսին*

Ո՛չ, ես քեզ չեմ հասկանում, միթէ դու կարող ես ինձ ճանաչել, ես Ադամի ամուսինն եմ։

ՕՍԿԱՆ

Ի՜նչ, ինչ. Ադամի կնիկը՞... էն վուր դիփունիս միխկի տակը գցից, էն վուր օցի հիդ դօստացաւ ու մարթուն խափից։ Վա՜, դուն դանայ էն կնիկն իս, վուր միզ էս բալբալումը գցեցիր, դժուխկը մոգոնեցիր ու հիմի էլ էկել իս ու աղբայուլթենի մէջ տիղը պըպզիլ իս։

ՄԱԳԹԱՂԻՆԷ

Բայց դու որո՞յ իրաւամբ ես դատապարտում, չէ՞որ Արարիչը վաղուց է ներել. չէ՞որ ամուսինները վաղուց քաւել են իրանց յանցանքը։

ՕՍԿԱՆ

Էլ ինչ քաւուլթին, վուր կնիկս ծընդան

էր ու դրամէն էլ մեռաւ։ Չէ, չէ, սա արթարուլթին չէ, բաս միխկ չին էնքան խալխը, վուր քու խաթրու դժուխկումը տանջւում ին. ես իմ աչքով տեսած բանն իմ ասում։

ՄԱԳԹԱՂԻՆԷ

Օ՜, սոսկալի երևոյթ, ուրեմն դժոխային արարած ես։

ԵՒԱՆ

Դու եղած ես Սանդարամետ։

ՄԱԳԹԱՂԻՆԷ *խաչակնքելով*

Մեղայ քեզ, Արարիչ Աստուած։

ԵՒԱՆ *սոսկալով*

Հեռու յինէն, փորձիչ սատանայ.

ՕՍԿԱՆ, *կողմ*

Վահ, դանայ ինչ ասի վուր էսէնց խըրտնեցին. ձիր արիւը, ինձ սատանայ գիդցան. բաս ինչի Նարեկ կարթացին։ (*Եւայ եւ Մազթ. յետ ու յետ խաչակնքելով գնում են*) Մի վախենաք, աղչիկ պարոն, եադ մարթ չիմ. ձիր աղիզ արիւը դիդենայ, ես էլ օղլուշաղի տէր իմ. կնիկ չունիմ, ամա վուրթիք շատ ունիմ։ (*Մազթ.*) Հաղիր դուն էլ իմ Հուռումխիմի նման իս, տէհնում իս ծիր մարթ իմ, ես քիզ ամա հէր կու յիշուիմ, էլ ո՞ւր իս վախենում, իմ աչկի լուս։

ՄԱԳԹԱՂԻՆԷ

Հեռի յինէն, բնակիչ գիւղոց։

Գնում են։

ՕՍԿԱՆ *մենակ*

Վահ, գանայ էնքան էլ ինչ բեդամալ խօսք ասի, վուր լիդաղատառ էլան. քիչ էր մնում, ուղում էի էն Ամամի կնդան պուշտի էի արի. աբա թամաշէն էնչախը կուլէր ա՛յ, աւտաս սիրտը գնար։ Հանաքը դէնը, ինչ ջոգած սիրուններիր ին։ Հիմի վուր գնան, գանգատ անին, ինչ կուլի իմ հալը. մտիկ արէք վուր ռոզգատռաք անին ու էս ծիրումեանս վուխտը բէտբուռ ըլիմ։—Գնամ, ախպէր, բօդիչ ուղիմ թէ բեդամալ արի, քանի շուտ է... թէ չէ ով գիդէ վիրչը... (*Կանչելով*) Աղչիկ պարուն, տիկին, օրիորդ. (*Նայելով կուլիանները*) էս ում հիդն ին խօսում, մնամ գանգատում ին։ Վահ, էն ով է տօ. ձիր արիւը, մդդսի Օնանն է, գանայ նա՞ էլ էստի է։ Վահ, սրա համա ասում էին էգեղեցին թաղնից կօսէ ու հիմի արբայուքին էլ ին բերի։ Արի սրան մէ քիչ թափ տամ, սա խօ միր քաղկիցն է։ Վա՛, էնէնց սիլի բիլի է անում էն մէկէլ աղչկայ հիդ, վուր կօսենաս իր կնիկն ըլի. ով գիդէ, ախպէր, էդէբա նուր մէկանց պատկուլլ է, արի ասա ով է էստի բէվիդեայ անում...

ՏԵՍԻԼ Զ.

ՆԱ, ՅՈՎՆԱՆ *եւ մի* ՏՂԱՅ *թեւերով*

ՕՍԿԱՆ

Օ՜, լուսը քու տեսնողին, մդդսի Օնան։

ՅՈՎՆԱՆ

Ողջոյն աստուածընտրեալ Ոսկանիդ, բարի գալուստ արժանաւորացդ արժանաւոր, սուրբդ 'ի սրբոց։

ՕՍԿԱՆ

Սա ինչ է ասում, զուրթ սուրվ գիդէ. ափսուս, գրատառ չիմ գիդի թէ չէ պակասը կու թամամեցնէի։ Ա՜յ կինծիդ կոտրուի, Կարապիտ վարժապէտ, վուր վունչիչ չըսովրեցրիր։ (*Մտածում է։*)

ՅՈՎՆԱՆ

Խորին մտածմանց մէջ էր։

ՕՍԿԱՆ

Հա, մէ քիչ խառնուած իմ. դուն վնանց իս, փառանց ի փառս, Յովնան ախպէր, էլի ժամումն իս զուլուղ անում։

ՅՈՎՆԱՆ

Ամենեքեանս սպասաւոր ենք Բարձրելոյն Արարչին։

ՕՍԿԱՆ

Գոհանամ Քիզ, Արարիչ Աստուած. Տէր Բարերար։ (*Հռութին*) Հա՛, Օնան ջան. ինչ իմ ասում, էն կնիկն ով էր, մէկը ասինք Եւէն էր, մէկէլը բարիշնա հօ չէ՞, հը՞։ Բանէ, վուր անփուղ, անբաժանինք վուրթուս համա ուզիմ, դրա հէրն ու մէրը չէ՞ն տայ։

ՅՈՎՆԱՆ

Երևում է որ անծանօթ էք Օրինաց գրքի հետ, այստեղ ամուսնութիւնն ու ծննդաբերութիւնն արգելեալ է, քանզի ամենեքեան արդար լցեմք։

ՕՍԿԱՆ *կողմ*

Քու գլխի պատատուիլը գիդենայ, մէկ դուն իս արթար մէկ էլ ես. թէ դիփունքը ինձ պէս ին, լաւ տարին էս Եդեմի գլխին դայ։ Թէ մէ ջրիրս կու տնտղէ՞ն։ (*Ցովնանին*) Լա՛ւ, բաս էտի հէր ու վուրթուլթին չրկա՞յ, բաս հարսնիքնիր չէ՞ ըլնում... ինչ է ասում տօ. բաս էտի ամէնքը հէնց մէ գլուխ խա՞լատտօ իր մնում, էնքան բարիշնէքը բաս մարթու չէ՞ն գնում։ (*Կողմ*) Էս ինչ մլթոնի խալխ են էլի,

տօ, ափսուս չէ դժուվիկը... ամէն օր զուռնա, մուզիկա, քէֆ ու զոզ, ինչ իս ուզում սրտով վուր չըգթնիս. զուրթ է խիստ շուք է, շունչը կտրում է, ամա ինչ հաջաթ, բաս փռնչիքը վռնց ին եսլայ գնում. էհ դրան էլ կու սովորինք հալբաթ։

Այս միջոցին դուռը թակում են։

ՅՈՎՆԱՆ

Երևի այգեպանը գնացել է դբօսանքի, հարցանեմ, տեսնեմ, ով է։

Տ. ՍՐԱՊԻՈՆԻ ՁԱՅՆԸ

Ո՞վ կայ էտի, էյ, բա՛յ արէք դուռը։

ՕՍԿԱՆ

Տէր Աստուա՛, ձէնը ճանաչս գալիս է, մնամ վուր Նորաշէնի Տէր Սրապիոնն է։

ՅՈՎՆԱՆ

Ո՞վ իցես, մարդ Աստուծոյ։

Տ. ՍՐԱՊԻՈՆԻ ՁԱՅՆԸ

Պաշտօնեայ Աստուծոյ, Տէր Սրապիոն։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՑՆՔ *եւ* **ՊԵՏՐՈՍ** *արագ վազելով ներս է մտնում.*

ՊԵՏՐՈՍ

Ո՞վ է, տէր Սրապիոն. ինչ կամիք, տամ-սակ ունիք։

Տ. ՍՐԱՊԻՈՆԻ ՁԱՅՆԸ

Ո՛չ, բայց բաց մեզ զդուռն։

ՊԵՏՐՈՍ

Ոչ բացից։

ՕՍԿԱՆ

Սա ինչ է ասում, ինչիր է դուս տալիս։ (Պետրոսին) Իժում գիդիս ով է էկողը վուր չիս թողնում. սա միր աւագերէցն է, սրան սաղ քաղաքը կու ճանչնայ. մէկը սա էր, մէկէլ Տէր Կոմբալոն, սրանց ամէն մէկի քարողը ջաւահիր էր. խալիս էր, վուր թամաշա էր գալի։ Աւտաս մէ միլիոն մարթ է մկրտի ու երիք միլիոն հաւտի վրայ կանգնեցրի։ Վա՛, զանայ էտէնց իք մարթ ճանչնում։

ՊԵՏՐՈՍ

Եղբայր Յովնան, ճանաչում ես. աշխարհական անձն իցէ, կարծեմ։

ՅՈՎՆԱՆ

Ոչ ճանաչեմ։

ՕՍԿԱՆ

Լաւ, սա վուր չէ ճանչնում, ես խօ ճանչնում իմ, աշխարհականս վուրն է։ Քառասուն տարուան ձեռնադրուած է, երիք-երիք կամիլափկա ունի, չուրս դուժին վարթապետական խաչիր. մէ սէլ պալօ կու դուս գայ սրա ստացած գաւազանեմէն ու չիս ճանչնում։

Տ. ՍՐԱՊԻՈՆԻ ՁԱՅՆԸ

Դէ՛, բաց իս անում թէ չէ։

ՊԵՏՐՈՍ

Ի ցուցակի ոչ իցես. հեռու յինէն, փորձիչ սատանայ, անիծեալն ի Բարձրելոյն, դաշնակից Բելիարին։

Տ. ՍՐԱՊԻՈՆԻ ՁԱՅՆԸ *զոռալով*

Հը՛, հը՛, ուշունց տալ չըլի, թէ չէ կօսիմ քու նաչալնիկին ու դուս կօնիլ տամ, օչխար։ Թէ դուն դռնապան իս, ես քիզմէն վից անդամ մինձ իմ։

ՊԵՏՐՈՍ *խաչակնքելով*

Ե՛րթ զհետս իմ, սատանայ. չքանան չարիքն, տարագրի տաղնապն։

ՕՍԿԱՆ *որ դռան ճեղքից նայում էր*

Վա՛, էս ինչ տեսայ, տէր իմ Աստուած, հաղիր անգսկածի բաթմիշ էլաւ։ Վայ մէ, վայ մէ, օ՛ մուղայիթ կենամ, աւելի լաւ է ձէնս կտրիմ, քանի չէր սաղ իմ։ Զէ, էստի հաթաթէք չի անցկենայ, սիլի բիլին ուվրո ձեռք կու տայ։ (*Հեռանալով*) Սա է էլի դըռնապանը. լաւ է ինձ էլ չըհարցրից, իժում ես էլ ինչ յիմար յիմար քոմագ էլ անում. միթոմ իմ բանը խիստ իմ դրստի, մնաց Տէր Սրապիոնինը։ (*Այդ միջոցին՝ երբ Յովնանը եւ Պետրոսը քաղաքավարի խօսում են, ծածուկ Օսկանը կտրում է մի ծաղիկ եւ դնում՝ ծոցը*)։ Վահ, չէնի ճիրիմէ, ինչ մինձ մարջան է է։

(*Ուղղուելով*)։

ՅՈՎՆԱՆ

Սիրեցեալ եղբայր մեր Ոսկան, ներկայացիլ ես հայր Աբրահամին։

ՕՍԿԱՆ

Հա, բաս։ Օնան ջան, ես մէ խամ մարթ իմ, բացի քիզ ծանօթ օշ ով չունիմ, լօթիանայ մէ լաւութին արա. ան չանց տու էստղանցի դուքան բազարը, ան ինձ քիչ կշտացրու, քաղցած զկրտում իմ. ասած է՝ «սարը սարի չի դիպչի, մարթը մարթուն կու դիպչի». ում գիդէ մարթուս վիրչը վունց է։

ՅՈՎՆԱՆ

Այստեղ մարդս կեցցէ այն ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ։

ՕՍԿԱՆ

Ղուրթ է, միս ուտիլը ամուլթ է Դրախտումը, ամա պատուայ խորագ հօ կուլի։ Թէ ունիս, մի խնայի, մէ բաժին մախսիս ան զօլօ. փորցած ունիմ, թթու բանը իշտահս խիստ է բաց անում։

ՅՈՎՆԱՆ

Կարիք չենք զգում ուտելու, վասն զի անմահական ենք, Աստուծոյ ծառաներս չենք քաղցում։ Մնասցես 'ի խաղաղութեան։

Գնում է։

ТИПОГРАФІЯ СОФІЯ

ՏԵՍԻԼ Ը.

ՕՍԿԱՆ *մենակ*

Ես էլ Աստու ծառայ իմ, մեռնիմ Նրա զօրութենին, ամա արի ասա, վուր գիլի հանգը քաղցած իմ։ (Կողմ) Վայմէ, վայմէ դուն մտիկ արա, վուր էստի արեստաւատ անին ու չըթողնին գնամ, էտ խօ սովամահ էլայ։ Ա՛խ, Օսկան, ինչ արի ինչ, իմ ձեռով ինձ համա գերեզման փորեցի։ Չէ՛, չէ, չարէս տեհնիմ, շուտ ծլկուիմ, թէ չէ ապքնիրս շուռ եկան։ (Տեսնելով եկողներին)։ Վա՛յ մէ հոքէհաննիրս գալիս ին. գնամ իմ քօշկը նստիմ, միթամ տիպեմէն չիմ ժաժ էկի։

Դուրս է փախչում։

ՏԵՍԻԼ Թ.

ԱԲՐԱՀԱՄ, ԵՂԵԱՑ, ՊԵՏՐՈՍ, ԵՆՈՎՔ, ՍՏԵՓԱՆՆՈՍ, *եւ* ԹԱՓԱՅԷԼ

Աբրահամ, Եղեայ, Գաբրիէլ, Ռափայէլ նստում են դատաւորների համար յատկացրած սեղանը. իսկ Ստեփաննոս նըստած է առանձին տեղ. Պետրոս եւ Ենովք կանգնած են հեռու։

Լսւում է քշոցների եւ փողերի ձայները։

ԵՂԵԱՑ

Այդ լաւ չէ. դժոխքումը տեղ չըկայ և միևնոյն ժամանակ Եդեմի ճանապարհը այդքան դիւրացել է։

ԱԲՐԱՀԱՄ

Ճուտով մեղաւորների մի մեծ հոսանքի էլ կըսպասենք։ Իզուր, շատ իզուր, Պետրո՛ս, բաց թողիք Տէր Սրապիոնին, նա կըյայտնէ դժոխային բնակիչներին ճանապարհի գաղտնիքը։ Պէտք է նրան ես պահէիք ինչպէս Ոսկան աշխարհականին։

ՌԱՓԱՑԷԼ

Հայր Եղեայ, բայց վերջինս չափազանց գող է և ստախօս, նա կարող է ամենքին ես վարակել, անմեղ ոգիներին ապականել։

ԱԲՐԱՀԱՄ

Պէտք է կամ քարանձաւում բանտարկել կամ անմահական ջուր խմացնել, որ մաքրազարգուի և ամեն չար ցանկութիւն վերանայ, այլապէս, այն, երկիւղալի է։

ԵՂԵԱՑ

Բանտարկելու և ոչ էլ անմահացնելու իրաւունք ունինք այդ Նախագահի վճռիցն է կախուած. մենք սորան երեք օր ազատութիւն տանք, բայց թող Յովնան վարժապետը հսկէ վերան. այսպէս առաւել լաւ է։ Ստեփաննոս, կանչիր Յովնանին և ասա Օսկանին ներս հրամայէ։

Ստեփաննոսը գնում է։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՑՆՔ *առանց* ՍՏԵՓԱՆՆՈՍԻ

ՆՈՑՆՔ

Տէր Եղեայ, խնդրեմ սաստեցէք Ոսկանին, որ ծաղիկներս չը փչացնէ։

ԵՂԵԱՑ

Բարի։ Ուրեմն մենք կըսպասենք երեք օր ես, բայց հսկողութեան ներքոյ կ'ենթարկենք. այսպէս չէ՞ ձեր առաջարկութիւնը։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՑՆՔ, ՍՏԵՓԱՆՆՈՍ, ՕՍԿԱՆ *եւ* ԳԱԲՐԻԷԼ, *վերջը* ՅՈՎՆԱՆ։

ՕՍԿԱՆ *առաջ է գալիս եւ դողալով*

Մմմեղայ, հհհայր Աբրահամ։

ԱԲՐԱՀԱՄ

Լսիր ուշադրութեամբ ինչ որ քեզ ասելու ենք...

ՕՍԿԱՆ *շոքելով*

Իմացայ վուր ուզում իք շատ անջիգար պատժի ինձ. ցաւդ տանիմ, միխկ իմ, էս մէկը բախշեցէք. բէհեսաբ կանիմ հօրէսի դէնը ու իմ գլխու բան կու բանիմ։

ԵՂԵԱՑ

Բայց լսեցի որ գող էք և ստախօս։

ՕՍԿԱՆ

Չէ, աղա ջան. ես հէնց գիտէի զիզիլակ-

նիր է՝ մոդ արի. մակումս ասի՝ կու տանիմ իմ պատի Ստեպկոի համա, էրէխայ է, կ'ուրախանայ, ասի։ Վուրվի է, մէր չունէ, ցաւդ տանիմ։

ԵՆՈՎՔ

Բայց դուք ողկոյզներս փչացրել էք։

ՕՍԿԱՆ

Ծարաւ էի, ջանիդ մեռնիմ, թէ չէ ինչի կ'ուտէի. վուր գլխամեռը բաղարում մէ լիդրը չ'առնիմ, օղնց չանց տուէք ձիր եարմունկէն վուրթէնն է։

ԱԲՐԱՀԱՄ

Շատ անտեղի էք խօսում։

ՕՍԿԱՆ

Քաղցած իմ, գենացվալէ սուլշի, ախար հոքիս խիլդի բիլդի է անում ու փուրս էլ ճիլդի բիլդի. չէնի ճիրի մէ, թէ քու մինուճար Իսակ վուրթուդ կու սիրիս մէ բան ուտացրէք, աչկիրս մթնում է, գլուխս պտուտ է գալիս. ձիր մարթ իմ, արա ինչ հարաքաթ ունիմ վուր դիմնամ։ Մէկէլ քնի համա մեռնում իմ, քաղցն էլ ջուդ է տանջում։ Ձիր արիւ սադալա մէ տիպ տուէք—ինթրկիմ. գողէնք չիմ ուզի, մէ մէշոկ ան ճիլոբ ըլի, ծածկիմ գլուխս, վունչիչ չիմ ուզում։ Մէ կտուր հաց, ջանիդ մեռնիմ, Աբրահամ ջան։

ԱԲՐԱՀԱՄ

Եդեմում քուն չըկայ, անմահները չեն քնանալ։

ԵՂԻԱՑ

Ննջեցեալները պէտք է երկրագնդի երեսին ապրեն, արդարներն Եդեմում, իսկ յանցաւորները Սանդարամետ։

ՕՍԿԱՆ

Ախար էսքան ժուդ խօսում իք, սլէթոսուեայ իք անում ու ես չիմացայ թէ՝ ես ինչ իմ։ Լաւ, ասէք, մէ ջուղաք տուէք, հիմի ես ինչ իմ, հոքի իմ, մարմին իմ, բարի իմ թէ դահռումար իմ։ Ասէք է, ես վուր սորան իմ։

ԵՂԵԱՑ

Դու մեղապարտ ես։

ՕՍԿԱՆ

Լաւ, թէ մեղաւոր իմ, բաս վուրդի պիտի ըլիմ։

ԱԲՐԱՀԱՄ

Ի Տարտարոս Ի Սանդարամետ։

ՕՍԿԱՆ

Վա՛, վա, ինչ խարար է, մենակ մարթ իք գըթի, զօրն ինձ վրայ իք փորցնում։ Առաջ առաջ ասիք դժուխկ, իժում Սանդարամետ, հիմի Տարտարոս։ Էսքան էլ անխղալթ կուլիմ։ Ես

ասում իմ պատիժս թեթիւացնիք, դուք կի խատակ ուզում իք քամի։ Էտ ինչ ջիգր է, վուր մտիլ իք, ինչ հաս ու հէսաբ ունիք ինձ մօդ։ Դուք վուր արթարնիրդ էտ իք անում, բաս միղաւորը ինչ կօնէ։ Ասա վիկալէք մէ զազուլս էլ ցցեցէք, էլի։ Փիէ... էսքան էլ դուշմնութիւն։

ԵՂԵԱՑ

Դու արդէն մեռած ես, կրկին սպանել անկարելի է։

ՕՍԿԱՆ

Քաղցած, անքուն թոդնում իք, կու մեռնիմ բաս ինչ զահռումար կուլիմ։ Վունչիչ չիմ ուզում ձիզմէն, թողէք յիդ գնամ, ախպէր. մէ մինձ բան էլ չըզիդնաք ձիր Եղեմը։ Ինձ ինչ վուր զօրբա տիղ է, սիրուն բաղ ու բաղչայ։

ԵՆՈՎՔ

Լսեցիք սորա անհամեստ խօսքերը, հայր սուրբ։

ԱԲՐԱՀԱՄ

Պատկառանքով խօսեցէք։

ՕՍԿԱՆ

Բաս ինչ, բաղչէն էն վուխտն ունի լազաթ, եվ մարթ զուգուկով քէպ կօնէ։ Եվ ուտիլ չըկայ, էլ ինչ Դրախտ է։

ԵՂԵԱՑ

Ա՜, հերետիկոս է, անպատճառ բողոքական։

ՕՍԿԱՆ *կողմ*

Տէր օղորմած Աստուած, թողէք, ախպէր, գնամ իմ ճամփով. զօռի բան է, էլ չիմ ուզում էստի մնայ։ Ինչ պատիւ տուիք՝ շատ շնորհակալ իմ, մաղարիչն ինձ վրայ ըլի։

ԱԲՐԱՀԱՄ

Ստեփաննոս, այս բոլորն արձանագրիր, որպէս զի ներկայացնենք Նախագահին. արդէն ծաղր ու ծանակ առնէ զմեզ։

ՕՍԿԱՆ *կողմ*

Հախը չէ մէ մինձ սկանդալ սարքիմ. ով գիդէ, արթարնիր ին, կուլի վախենան ինձմէն ու խաթր անին։

ԵՂԵԱՑ

Երթանք, նախնական քննութիւնն արդէն կատարեցինք։ Դու, յանցաւոր Ոսկան, կըմնաս այստեղ երկու օր ևս մինչև Նախագահի գալը, այնուհետև վճիռը կախուած է Նորանից։ Ապաշխարեցէք, զի մերձեալ է ժամանակն։

Ամենքը գնում են բացի Օսկանն ու Յովնանը։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՕՍԿԱՆ եւ ՅՈՎՆԱՆ

ՕՍԿԱՆ *երկաթ նայում է զնացողների յետեւից:*

Ամա նամարդուլ արի հա. ախար ասած է՝ «ինչ մարդ իր գլխին կոնէ, դուշմանը չի անի»։ Տօ, խանի խարաբ, հաղիր դիվունքը արթար գիդէին, տօ, ուր էիր զօռով դժուխկի անումը տալիս։ Հիմի լաւ էլաւ. վանց էստի իս, վանց էնդի։ Կինծիդ կոտրուի հա, վուր կաշումդ չիս մնում։

ՅՈՎՆԱՆ

Մի ախրիր, Ոսկան եղբայր, Նախագահը չափազանց բարի է և ողորմած, հայցիր Նորա գթութիւնը, անկեղծութեամբ մեղայ գոչէ և անշուշտ կընեբէ. մենք ևս մեր կողմից կըբարեխօսենք։

ՕՍԿԱՆ

Լաւ, երիք օր քաղցած ու անքուն վանց մնամ։ Ախսուս չէր դժուխկը, ինձ համա վիր էի ննդած. գնամ էլի էնդի, ախպէր, ջանդամը թէ մէ սահաթ կու չարչրին, հօ չիմ մեռնի։ Զատ շատ, էրկուսի մագիէր երիք չամչա արճիճ խմացնին, մէ քիչ կարմիր պլիտու վրայ ման ածին.—Էս չէր իմ պատիժը։ Մէկէլներու պէս հօ ժարկօի չին չինի ու մանգանի տակը տրոր։ Փառք Աստու, հօ վարժուեցայ. բաս վիրչը էն քէփը, էն զօղը, էն կնդդիրքը վանչիչ։ (Յովնանը, որ զբօսնում էր՝ ծածկուեց կուլիսներում)։ Ախսուս դժուխկ, ես ու իմ հորին։ Հա, մոռացայ ասիմ, էն հառամզադա սատանէքը կարտ խաղալ էլ սովրեցրին, 900 բաջաղլու օսկի մէնակ էն ամսին տարայ. մէ հեստի դարդիմանդ ին խաղում, վուր կօսենաս օսկին խուրմայ ըլի։ Էս տարի մէ բարիգենդանք, մէ ղէյսալամ ունէինք, վուր Պարնի վուխտն էլ չին տեսի բախկումը. մէգլուխ ծիծաղ, հրրոց, կամպանեայ, ուրիշ ինչ իս ուզում։ Զիր արիւը, դժուխկի անունն է կոտրած, ամա հինդ ջէր Եդեմեմէն լաւն է։ (Նայելով շուրջը) Օհօ, զարաուլս հիւացաւ։—Արի ախպէր, ծլկուիմ, խիստ լաւ վուխտն է, ամէնքն արխային ին։ Թէ բան է՝ բռնեցին—բաս ես Օսկանը չըլիմ, թէ սրանց օխտեմէն չըգամ. ըհը՞, էս բիխրս էստի չըլի։ Մէ չփոթ կանգնեցնիմ, մէ ոկանդալ գցիմ, վուր էրկու ձեռով իրանք բացանին

դռնիրը։ Արա եակլայ, մնաք բարով, գնում իմ։ Տէր Աստուած, դուն ըլիս իմ քոմակը, կամար կատար Աստուածածին, քու փէշն իմ բռնում, մատաղը ինձ վրայ է։ Մնաք բարով, տղէրք ջան, ես գնացի։

Դուրս է գնում. կարճ ժամանակ լռութիւն։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՕՍԿԱՆ եւ ԱՄԻՆՔԸ

Մտնում են բոլոր գործող անձինք։ Օսկանի կռներից բռնած ունին Գաբրիէլն ու Ռափայէլը։ Եղեայ, Աբրահամ, Պետրոս, Յովնան, Ենովք, Եւայ, Մագթաղինէ, Միքայէլ, Ստեփաննոս, դասք հրեշտակաց։

ՕՍԿԱՆ

Թողէք ախպէր, ինչ իք կռնիրս բռնի. ինչ է, դանչաղ իմ, վահ, մարդասպան իմ. չիմ ուզի ձիր Եղեմը, թողէք էլի ռադ ըլիմ. թէ փիսն իմ—էլ ուր իք պահում, ու թէ լուն իմ—էլ ուր իք բէարուռ անում։

ԵՂԵԱՑ

Դու չես կարող այդ պատկերով հեռանալ այստեղից։

ՕՍԿԱՆ

Ի՞նչ, դանայ ուզում իք էրէսիս մուր քսի, վա, ես խօ չիմ գողցի. ափ աշկարա մէ ճութ խաղուղ է էլի, կերիլ իմ, կերիլ իմ, հօ ատկաղ չիմ անում։

ԱԲՐԱՀԱՄ

Աւելորդ է խօսելը, որովհետև գտնուեց սխալը. պարզարանուեց ամեն ինչ։ Օ՜ զարհուրելի է, զարհուրելի։

ՕՍԿԱՆ

Ի՞նչ կայ զարհուրելի, ապրանքի խէր...

ՌԱՓԱՅԷԼ

Ցանցանքը Ադամինն է, հայր Աբրահամ, որ իւր ժամանակին չէ ուղղել սխալը և ահա հետևանքը տեսնում էք։

ԱԲՐԱՀԱՄ

Ուրեմն այդ համարով, ասում էք, Ոսկանը պէտք է գրաստ ծնուէր, իսկ իւր գրաստը՝ ընդհակառակը Ոսկան։ Նշանակում է շուրջ վաթսուն և հինգ տարի գրաստի հոգով Ոսկանը շրջել է երկրագնդի երեսին, մինչդեռ մարդկային հոգով գրաստը տանջուել է սորա ձեռքին։

ՕՍԿԱՆ

Ի՞նչ է, ինչ է ասում, ես գրաստ իմ. վա

է, ինձ աւանակ էլ իր չինում, ամուլթ չէ՞ ձիր արթարուլթեանը։

ԵՂԵՍԱԲ

Իմ կարծիքով պէտք է այս սխալը ուղղել իսկոյն, որովհետև արդարուլթիւն չէ որ խեղճ մարդը վաթսուն և հինգ տարի իբրև գրաստ տանջուի։ Այժմ պէտք է դերերը փոխել։ (Աբրահամ եւ Ռափայէլ խորհրդածում են)։ Այդպէս ուրեմն, Օսկանին պէտք է գրաստ դարձնել։

ԱԲՐԱՀԱՄ

Ոչ թէ վաթսուն և հինգ տարի, այլ եօթանասուն, հինգ տարին տոկոս։

ԵՂԵՍԱԲ

Իսկ նախկին գրաստին վերադարձնել մարդկային բոլոր արտօնուլթիւնները եօթանասուն և հինգ տարի։

Օսկանը ապշում է։

ՌԱՓԱՅԷԼ

Միանգամայն ճիշտ է, տասը տարին իբրև վարձատրուլթիւն մեր սխալմունքին համար։

Օսկանը զարհուրում է։

ՕՍԿԱՆ

Վայ մէ, էտ բանը չանիք, թէ չէ ինքս ինձ կու խիխտիմ։

ԱԲՐԱՀԱՄ

Իզուր է այդ բոլորը, որովհետև ճակատագիրն անկարելի է փոխել։

ՕՍԿԱՆ

Գեթաղլայ, ինչ ուզում էք չինեցէք, ամա անասուն չիմ դառնայ, չէ. պատժեցէք, ծեծեցէք, ուզդատռաք արէք, կալրէ կարասը գցեցէք, օղոնդ կի էլի մարթ ըլիմ։

ԵՂԵՍԱԲ

Խօսելն աւելորդ է, մենք ժամանակ չունինք երկար բարակ քեզ լսելու։

ՕՍԿԱՆ *սպառնալի*

Չիմ դառնայ չէ՞, ես դաբուլ չիմ, արուն կու պատահի, մուղայիթ կացէք վուր ժինիքս գալիս է, աչկիրս արլանդուա է ըլում, ա՛յ, տեսէք վուր մէկն ու մէկին բաթմիշ չանիմ։

Կոնները յետ է քաշում, պատրաստւում է բռունցք զարկել։

ԱԲՐԱՀԱՄ

Ա՜, սպառնալիք։ Ստեփաննոս, կանչիր Սերովբէին և Քերովբէին իրանց հրեղէն լախտերով։ Քաշեցէք այս անասունին ախոռը։ (Ռափայէլ եւ Գաբրիէլ բռնում են թեւերից)։ Վա՛յ մէ, վա՛յ մէ, էրվեցայ, ձիր արիւ սադաղա բախշեցէք, միղայ Ասծու։ (Հոքելով

եւ լալով) Ամուլթ է ինձ ամա. ախար խալին ինչ կօսէ, բօղազս մի դուս կտրէր։ *(Քաշում են ընկի)* Չիմ դառնայ, չէ, ամեն բանին դարուլ իմ՝ օղոնդ հայվան չըլիմ։ Վայ մէ, վայ մէ, ախար Աստուձ կու վիկալնէ վուր՝ վունցոր մարթի մանիմ Եդեմ ու աւանակ դառած դուս գնամ էստղանց։

ԵՂԵՍԱԾ

Բաւական է, լռիր։

ՕՍԿԱՆ

Քու հախն է, կինձիդ կոտրվի, Օսկան, աբա հիմի կի մեռայ, ա՛յ։ *(Հաչիս է գլխին խփելով)* Մարթա ջան, մէ աչկդ բաց արա՛, տիս քու մարթուն, տիս քոռանալու, թուրմէ հայվան է էլի... վայ մէ, վայ մէ... թողէք, թողէք մէ սահաթ էլի մարթավարի խօսիմ, կարօտս քաշիմ... մնաք բարով, ախպրտիք, փիշայա՛յ, բանթմիչ էլա՛յ... էշ դառայ, աւանակ։ *(Ոտները թափահարելով պառկում է։ Թրեւում են, Օսկանը հակառակում է)* Չիմ ուզում, չիմ ուզում... *(Դուրս են տանում ընկի)*. Վա՛յ, վա՛յ, վա՛յ։

Լսում է երկար ժամանակ վայնասունը։ Բեմը դատարկում է։

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Անմիջապէս յետեւի վարագոյրը բարձրանում է։ Տեսարանը ներկայացնում է Օսկանի ննջարանը։

ՕՍԿԱՆ, *պառկած է մահճակալում. զարթնելով նայում է շուրջը եւ տեսնելով իւր կնոջ՝ Մարթային, երեսը խաչակնքում է եւ հառաչելով։*

Օ՜հ, միղա՛յ Աստուծ, միղա՛յ Աստուծ, էս ինչ փիս էրազ էր վուր տեսայ... Փանք Աստուծ, էլի թուրմէ մարթ իմ էլի։ Ո՛ւֆ, նալլաթ քի, չար սատանայ։

Խմում է մի բաժակ ջուր եւ նորից քնում։

ՎԱՐԱԳՈՅՐ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

891.9